

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Վաեմափայլ Տ. Պօղոս Նուբար Փաշան Փարիզում Վեհափառ Հայրապետի կողմից ստանձնած իւր բարձր առաքելութիւնը միանգամայն գոհացուցիչ և իրեն յատուկ խոհականութեամբ կատարելով՝ ճանապարհուելէ Եղիպտոս։ Մեկնելուց առաջ Նորին Սրբութեան Վեհափառ Կաթողիկոսին ի միջի այսոց 8/21 փետրվարի 1914 թուով գրում է։ «Պատիւ ունիմ հաստատելու շնորհաւորական հետազիրս՝ զոր ուղղեցի Զերդ Սրբութեան իսկոյն որ համաձայնագրոյն կնքման լուրը ստացաւ, Ներուի ինձ, Վեհափառ Տէր, կրկնելու Զեղ հոս, թէ իմ և թէ պատգամաւորութեան անուամբ, մեր ամենախորին շնորհաւորութիւնները, Շնորհիւ Զերդ Վեհափառութեան, շնորհիւ Զեր բարձր և իմաստուն կարգագրութեան՝ որ կրցանք բանակցութեանց տալ, կարող եղանք մեր համեստ և արդար պահանջմանց յաղթանակը պսակել։ Ընդհանուր հայ Ազգը երախտագիտական ամենախորին զգացում մը միայն կրնայ ունենալ հանդէպ իր վեհանձն Պետին՝ որ զինքը կառավարելու բեռը ստանձնած է. Կը վերաբանամ Եղիպտոս, ուր տարիէ մաւելի ամբողջովին երեսի վրայ ձգուած գործերս անհրաժեշտ կերպով իմ ներկայութիւնս կը պահանջեն։ Վեհափառ Կաթուղիկոսն օրհնութեան և շնորհակալական յատուկ Կոնդակ է ուղղում Վաեմ։ Տ. Պօղոս Նուբար փաշային*։ Յայդ կոնդակով միաժամանակ յանձնարարում է Նրան շարունակել մնալ իւր ներկայացուցիչն ասելով. «Լիայոյս եմք, զի յետ այսորիկ ես, ի դէպս անհրաժեշտութեան, Դուք՝ որպէս ներկայացուցիչ Մեր, զնոյն ազգօգուտ և զմարդասէր գործունէութիւն ունիք շարունակել վասն կատարեալ յաջողութեան և իրագործման բարենորոգութեանց հայաբնակ գաւառաց Տաճկաստանի, յանդորրութիւն և յերջանկութիւն բազմատանջ հոգեսր զաւակաց Մերոց»։

*) Որը տպւում է «Երաբատ» սոյն համարի պաշտօնական բաժնում։

Ազգային Պատգամաւորութեան անդամ Եւրոպիոյ Առաջնորդ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Իւթուճեան իւր 4/17 մարտի Վեհափառ Հայրապետին Մանչեստրից ուղղած գրութեան մէջ ի միջի այլոց ասում է. «Վեհափառ Տէր, վուժամ անկեղծ շնորհաւորութիւններ և խնդակցութիւններ յայտնել Զեր Վեհափառութեան՝ Որոյ շնորհիւ և Օրբնութեամբ սոյն այս կենսական հարցն վերջապէս լուծուեցաւ կարելիութեան սահմանի մէջ»:

Ապաքէն ցանկալի և ի բոլոր սրատէ մաղթելի է, որ գարձեալ պատրանք և յուսախարութիւն շինի մեր հէտ Ազգի բաժինն, և, պատոյ, կենաց և ընչեց ապահովութիւնն և կատարեալ անդորրութիւնն ընդ միշտ տիրէ ի Հայստան աշխարհ՝ որուն համար նոր դարավլուխ մը բացուած պիտի լինի, և որով Ազգային տարեգրութեանց մէջ, Վեհափառ Տէր, Զեր Սրբութեան անունն արդարե անմահ պիտի մնայ ի շարս Մեծանուն Հայրապետաց»:

Նոյն առթիւ Ազգային Պատգամաւորութեան անդամ, տպային խնդիրներին ծանօթ, Մեծարգոյ պլ. Յարութիւն Ն. Մոսափչեան ի միջի այլոց Խնդրոնից գրում է Վեհափառ Հայրապետին. «Որդիական ամենախորին ակնածանոք Թոյլտութիւն կը խնդրեմ շնորհաւորելու խոնարհարար Զեր Վեհափառութիւնը այն արդիւնքին համար՝ որուն յանդեցան Զեր Ա. Օծութեան կազմած Պատուիրակութեան աշխատութիւնները շնորհիւ անոր գործունէութեան մասին Զեր Վեհափառութեան նշանակած ուղղութեան ու գծած սահմանին. Թուրքիոյ Հայկական նահանգներու Հայոց վիճակին բարւորման համար Զեր Հայրապետական բարձր Սրբութեան ի հանդէս բերած ձեռներէցութիւնը ամենափայլուն դրուագներէն մին պիտի լինի Հայ ազգային տարեգրութեանց և ներկայ ու ապագայ ամրող Հայութիւնն Զեր Ա. Օծութեան շնորհապարտ պիտի մնայ յաւէտ առ այն. . . . Զեր Ա. Օծութեան սոյն թանկագին հրամանիր՝ զոր ստացած ըլլալս ամենամեծ բաղդն ու վասքը պիտի ըլլայ յաւէտ իմ կեանքիս, Հանատիր եղայ կատարել կա-